«ԵՐԵՎԱՆԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ԵԱՍՄ-ԳՀԾՁԲ-21/3-1

ք. Երևան «01» 04. 2021թ.

«Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկը ի դեմս տնօրեն Ա. Գրիգորյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԿԵՐԽԵՐ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրենի լիազորված անձ Դ. Սաֆարյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Էլեկտրական սարքերի վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է առավելագույնը 2000000 (երկու միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Պատվիրատուն վճարումը կատարում է իրեն փաստացի մատուցած ծառայության դիմաց՝ հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

4.3 Պատվիրատուն վճարումը կատարում է իրեն փաստացի մատուցած ծառայության դիմաց՝ հանձման-ընդունման արձանագրության հիման վրա, իսկ մինչև 30.12.2021 թվականը պահանջ չներկայացվելու դեպքում չկատարված գումարի չափով պայմանագիրը լուծվում է, առանց որևէ իրավական պարտավորության:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկ	«ԿԵՐԽԵՐ» ՍՊԸ
ք. Երևան, Շիրակի 88/1	Ք. Երևան, Տիգրան Մեծի պող. 76, շին. 41
ֆինանս.աշխ.գործառն.վարչություն	« Ամերիաբանկ ՓԲԸ»
ՀՎՀՀ 900012000700	Հ/Հ 1570054651800100
ՀՀ 02697772	ՀՎՀՀ 00485116
Տնօրեն ---------- Ա. Գրիգորյան	Տնօրեն ---------- Դ. Սաֆարյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
«01» 04. 2021թ. կնքված
ԵԱՍՄ-ԳՀԾՁԲ-21/3-1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	Պայմանագրի կատարման առավելագույն գումար /ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը
1	50111260	Էլեկտրական սարքերի վերանորոգման ծառայություն. «Կերխեր» HD 9/20-4 Classic սարքի սպասարկման մասնագետի մատուցում «Կերխեր» HD 9/20-4 Classic սարքի սպասարկման մասնագետը պարտավորվում է՝ 1. Ամսեկան 3 անգամ այցելել հաճախորդին, իրականացնել սարքի տեխնիկական վիճակի ստուգում, 2. Կատարել պոմպի, շարժիչի, էլեկտրական բլոկի գործարկման խնդիրների դիագնոստիկա, խնդիրների առկայության դեպքում շտկել դրանք, 3. Կատարել ընդհանուր դիագնոստիկա, իրականացնել խորհրդատվություն փոխարինման ենթակա մասերի վերաբերյալ: 4. Վթարային սպասարկում, ըստ պատվիրատուի կանչի ախշատանքային ժամերին և օրերին: 3. Դիագնոստիկայի արդյունքում անհրաժեշտ պահեստամասերի փոխարինում նոր գործարանային պահեստամասերով:	դրամ	2000000	1	Ծառայությունները իրականացվելու են ք. Երևան, Շիրակի 88/1	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո մինչև դեկտեմբերի 25-ը

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

Պայմանագիրը կնքվելու է Պատվիրատուի կողմից նախատեսված ֆինանսական միջոցների չափով:

Ծառայությունները ըստ սույն պայմանագրի Հավելված 1.1-ի:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկ
ք. Երևան, Շիրակի 88/1
ՀՀ ՖՆ աշխ.գործառն.վարչություն
Հ/Հ 900012000700
ՀՎՀՀ 02697772

Տնօրեն ---------- Ա. Գրիգորյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«ԿԵՐԽԵՐ» ՍՊԸ
Ք. Երևան, Տիգրան Մեծի պող. 76, շին. 41
« Ամերիաբանկ ՓԲԸ»
Հ/Հ 1570054651800100
ՀՎՀՀ 00485116

Տնօրեն ---------- Դ. Սաֆարյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 1.1
01» 04. 2021թ. կնքված
ԵԱՍՄ-ԳՀԾՁԲ-21/3-1 ծածկագրով պայմանագրի

Ցանկ

Հ/հ	Արտիկուլ	Անվանում	Չափման միավոր	Քանակ	Միավորի գին ՀՀ դրամ
1	2.880-990.0	Օղակների հավաքածու 5 հատ	կոմպ	1	1 940,0
2	2.880-990.0	Օղակների հավաքածու 5 հատ	կոմպ	1	1 940,0
3	2.880-990.0	Օղակների հավաքածու 5 հատ	կոմպ	1	1 940,0
4	9.751-007.0	Բռնակ HD 6\15	հատ	1	11 800,0
5	9.751-023.0	Շրջանակ	հատ	1	48 810,0
6	5.443-291.0	Ռետինե խողովակի նիպպել/ոտիկ	հատ	1	670,0
7	6.388-719.0	Ռետինե խողովակ DN16	հատ	1	5 380,0
8	9.761-135.0	Առանցքացից	հատ	1	300,0
9	7.312-004.0	Տափօղակ 8-200HV-A3E ISO 7089	հատ	1	40,0
10	9.761-045.0	Ձգող օղակ 13,3x2,4	հատ	1	300,0
11	9.761-044.0	Խցուկ 6.343-168.0	հատ	1	300,0
12	9.761-186.0	Խողովակի միացում 30°	հատ	1	1 100,0
13	9.761-038.0	Պտուտակ M6x30	հատ	1	300,0
14	5.387-620.0	Նախազգուշացնող գրվածք նոր	հատ	1	500,0
15	6.643-943.0	Նախազգուշացնող գրվածք տաք	հատ	1	400,0
16	4.515-347.0	Ծածկերի հավաքածու փոխարինման համար	հատ	1	4 660,0
17	9.761-213.0	Ռետինե խողովակի սեղմակ	հատ	1	500,0
18	9.761-136.0	Հետին պատ	հատ	1	4 300,0
19	9.761-208.0	Խցան	հատ	1	500,0
20	9.761-117.0	Ռետինե խողովակի հենակ	հատ	1	2 900,0
21	9.761-216.0	Սնկաձև բռնակ	հատ	1	1 500,0
22	7.311-620.0	Խուլ մանեկ M8 -A2	հատ	1	300,0
23	5.310-062.0	Մանեկ	հատ	1	810,0
24	5.310-076.0	Պնդօղակ	հատ	1	1 020,0
25	4.730-168.3	Ջրի ֆիլտր	հատ	1	6 780,0
26	7.303-186.0	Պտուտակ կիսագաղտնի գլխիկով M8x40 -St-A	հատ	1	210,0
27	7.303-046.0	Պտուտակ M6x12 -St-R3R (In6Rd)	հատ	1	90,0
28	9.761-037.0	Պտուտակ 6,0x20-ST-A2R	հատ	1	300,0
29	6.648-416.0	Կոնտրգայկա սև M20	հատ	1	600,0
30	9.761-049.0	Կլոր կտրվածքով օղակ 19,3x2,4	հատ	1	300,0
31	9.761-019.0	Կոլլեկտոր	հատ	1	900,0
32	6.435-662.0	Անիվ D200	հատ	1	2 720,0
33	9.763-331.0	Անիվի ծածկ D 180 cap	հատ	1	200,0
34	9.763-272.0	Անիվ D180	հատ	1	3 899,0
35	9.761-041.0	Ամորտիզատոր կաուչուկե 6.339-007.0	հատ	1	1 000,0
36	9.761-305.0	Մալուխ՝ վարդակով	հատ	1	24 100,0
37	9.761-086.0	Մալուխի կեռիկ 5.044-661.0	հատ	1	400,0
38	5.034-494.0	Բռնակ	հատ	1	280,0
39	9.761-052.0	Պտտվող խցան	հատ	1	3 210,0
40	9.761-056.0	Տափօղակ D 18 x 28	հատ	1	1 060,0
41	9.761-007.0	Ձգող օղակ G 3/8"	հատ	1	400,0
42	9.761-104.0	Ձգող օղակ D 15.54x2.62	հատ	1	300,0
43	9.761-107.0	Ձգող օղակ 28.30 x 1.78	հատ	1	510,0
44	9.761-004.0	Ձգիչ օղակ 17.13 x 2.62	հատ	1	340,0
45	9.760-107.0	Ձգիչ օղակ 16 x 2 - NBR 80 (9	հատ	1	340,0

46	9.761-105.0	Սեղմիչ G 1/2"	հատ	1	400,0
47	9.761-108.0	ND Սեղմիչ D 18	հատ	1	9 660,0
48	9.761-106.0	HD ձգիչ D 18	հատ	1	9 140,0
49	9.761-099.0	Ձգող օղակ 12.42x1.78	հատ	1	250,0
50	9.761-067.0	Դատարկման խցան G 1/2"	հատ	1	2 100,0
51	9.761-075.0	Փականի թամբ D 18x26	հատ	1	1 310,0
52	9.751-028.0	Փականի թամբ	հատ	1	1 310,0
53	9.751-027.0	Մխոց	հատ	1	1 180,0
54	9.751-064.0	Անջատիչ՝ ամբողջական *CN	հատ	1	8 510,0
55	9.761-064.0	Ճնշումային զսպանակ	հատ	1	300,0
56	9.761-057.0	Խցան G 3/8"	հատ	1	1 300,0
57	9.751-085.0	Ցիլինդրի գլխիկ	հատ	1	300,0
58	9.751-081.0	Մխոցային գլանի գլխիկի ճնշման անջատիչ, միայն փոխարինման համար	հատ	1	186 400,0
59	9.761-237.0	Պտտվող բռնակ	հատ	1	1 360,0
60	7.306-047.0	Պտուտակ գլանաձև գլխիկով M8x60-8.8	հատ	1	180,0
61	9.751-084.0	Լարման սահմանափակիչ	հատ	1	16 100,0
62	9.751-030.0	Ճնշման անջատիչ՝ հավաքված, միայն փոխարինման համար	հատ	1	6 870,0
63	9.761-319.0	Փականի պտուտակ	հատ	1	2 700,0
64	9.751-004.0	Փական ՝ ամբողջական	հատ	1	1 690,0
65	7.401-353.0	Առանցքակալ NUP 305-Waelz.St.	հատ	1	39 700,0
66	9.761-077.0	Շտիֆտ	հատ	1	640,0
67	9.761-279.0	Շարժաթև	հատ	1	4 270,0
68	9.751-008.0	Միացնող սյուն	հատ	1	5 120,0
69	9.761-078.0	Լվացող մեքենա D 9.3 x 24	հատ	1	300,0
70	9.761-140.0	Կցեզր մշակված	հատ	1	11 200,0
71	9.761-137.0	Միացնող օղակ W 42x55x8	հատ	1	2 240,0
72	9.761-007.0	Ձգող օղակ G 3/8"	հատ	1	400,0
73	9.761-180.0	Հաստացնող օղակ D 55.56x3.55	հատ	1	880,0
74	9.761-081.0	Ձգող օղակ D 2.62x107	հատ	1	1 610,0
75	9.761-177.0	Ձգող օղակ	հատ	1	300,0
76	9.761-093.0	Յուղի մակարդակի ցուցիչ G3/4"	հատ	1	1 910,0
77	7.343-008.0	Փականային օղակ 25x1,2-St-vz DIN 471	հատ	1	180,0
78	9.761-073.0	Պողպատե կափօղակ	հատ	1	300,0
79	9.751-078.0	Պոմպերի հավաքածու միայն փոխխարինման համար HD 9/20	հատ	1	156 330,0
80	9.761-138.0	Ասեղի կրիչ	հատ	1	10 680,0
81	9.761-057.0	Խցան G 3/8"	հատ	1	1 300,0
82	9.761-071.0	Ականոց D 18	հատ	1	4 360,0
83	7.306-020.0	Ցիլինդրիկ գլխով պտուտակ M6x16	հատ	1	200,0
84	9.761-174.0	Հարթ գլխիկով պտուտակ	հատ	1	510,0
85	9.761-207.0	Սահմանափակող տափօղակ	հատ	1	200,0
86	9.761-022.0	Յուղի չափման հորատիչ G 3/8"	հատ	1	2 500,0
87	9.761-120.0	Կափարիչ	հատ	1	4 270,0
88	9.761-278.0	Կորպուս	հատ	1	26 990,0
89	6.365-334.0	Փորվածքով օղակ 18X26X6/8	հատ	1	1 390,0
90	9.761-118.0	Առանցքակալի ծածկ	հատ	1	510,0
91	7.304-397.0	Վեցանկյուն պտուտակ M8x20-8.8-A2E ISO 4	հատ	1	90,0
92	7.312-285.0	Տափօղակ 10-200HV-A2E ISO7093-1	հատ	1	90,0
93	7.318-039.0	Պրիզմատիկ միացման սեպ 8x7x36-C45K	հատ	1	200,0
94	7.304-419.0	Վեցանկյուն պտուտակ M10x35-8.8-A3E	հատ	1	180,0
95	9.751-082.0	Շարժիչ փոխարինման համար 5,5 կՎտ	հատ	1	387 700,0

96	6.363-328.0	Կլոր կտրվածքով օղակ 23.16x5.33	հատ	1	420,0
97	7.311-511.0	Վեցանկյուն պնդօղակ M10-8-A2E ISO 7040	հատ	1	180,0
98	9.761-242.0	Ծակոտկեն ռետինից ձգող լար փոխարինման համար	հատ	1	700,0
99	9.761-304.0	Շարժիչի միացման լար 4 x 1,5	հատ	1	3 100,0
100	9.761-199.0	Տափակ խրոցակ 6.641-270.0	հատ	1	200,0
101	9.761-328.0	Ադապտերի բռնակի պտտվող անջատիչ	հատ	1	500,0
102	9.761-109.0	Կորպուսի ստորին հատված	հատ	1	5 100,0
103	9.761-519.0	Հենքի կողային հատված 10.0/10.0/7	հատ	1	340,0
104	9.761-154.0	Անջատիչի պտտվող բռնակ	հատ	1	2 400,0
105	7.303-046.0	Պտուտակ M6x12 -St-R3R (In6Rd)	հատ	1	200,0
106	7.303-084.0	Պտուտակ 4x25 -10.9-R2R (K-In6Rd)	հատ	1	200,0
107	7.303-106.0	Պտուտակ 4x12 -10.9-R2R (IN6RD)	հատ	1	210,0
108	6.631-190.0	Շարժիչը պաշտպանող անջատիչ	հատ	1	20 550,0
109	9.761-161.0	Տեղաբաշխիչ վահանակի կափարիչ	հատ	1	3 100,0
110	5.802-261.0	Ամրացման դետալ	հատ	1	712,0
111	6.632-414.3	Կոնտակտոր LC1-D18V7SC090	հատ	1	28 050,0
112	9.751-139.0	Ցողացիր	հատ	1	30 040,0
113	6.401-412.0	Պտտվող միակցիչ	հատ	1	14 320,0
114	9.751-088.0	Բարձր ճնշման խողովակ DN8 20մ	հատ	1	72 000,0
115	9.751-087.0	Ռետինե խողովակ HD DN8 10մ	հատ	1	40 630,0
116	2.880-990.0	Օղակների հավաքածու 5 հատ	կոմպ	1	1 940,0
117	9.751-089.0	Շիթային խողովակ փոխարինման համար 600մմ	հատ	1	19 500,0
118	2.880-990.0	Օղակների հավաքածու5 հատ	կոմպ	1	1 940,0
119	9.751-031.0	Պողպատե խողովակների հավաքածու	հատ	1	400,0
120	2.883-894.0	Խողովակածայր HG 400 - 700 լ/ժ 047	հատ	1	1 940,0
121	2.880-990.0	Օղակների հավաքածու 5 հատ	կոմպ	1	1 000,0
122	0.000-000.0	Պլանային սպասարկում, դիագնոստիկա, աշխատանք, ամիսը 3 անգամ	ամիս	1	40 000,0
123	0.000-000.0	Վթարային սպասարկում,ըստ կանչի ախշատանքային ժամերին և օրերին	այց	1	20 000,0

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկ
ք. Երևան, Շիրակի 88/1
ՀՀ ՖՆ աշխ.գործառն.մարմին
Հ/Հ 900012000700
02697772

Տնօրեն ---------- Ա. Գրիգորյան
/ստորագրություն/

ԿԱՏԱՐՈՂ

«ԿԵՐԽԵՐ» ՍՊԸ
Ք. Երևան, Տիգրան Մեծի պող. 76, շին. 41
« Ամերիաբանկ ՓԲԸ»
Հ/Հ 1570054651800100
ՀՎՀՀ 00485116

Տնօրենի Լ/Ա ---------- Դ. Սաֆարյան
/ստորագրություն/

Հավելված N 2
«01» 04. 2021թ. կնքված
ԵԱՍՄ-ԳՀԾՁԲ-21/3-1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության													
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**										
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	50111260	Էլեկտրական սարքերի վերանորոգման ծառայություն			2000000	2000000	2000000	2000000	2000000	2000000	2000000	2000000	2000000	2000000	2000000

*Վճարումներն իրականացվելու են Պայմանագրի գործողության շրջանակներում, փաստացի մատուցված ծառայությունների չափով՝ Կատարողի կողմից հաստատված և ներկայացված հաշիվ-ապրանքագրերի և հաստատված ընդունման-հանձնման արձանագրությունների հիման վրա:

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկ
ք. Երևան, Շիրակի 88/1
ՀՀ ՖՆ աշխ.գործառն.վարչություն
Հ/Հ 900012000700
ՀՎՀՀ 02697772

Տնօրենի Լ/Ա ---------- Ա. Գրիգորյան
/ստորագրություն/

ԿԱՏԱՐՈՂ

«ԿԵՐԽԵՐ» ՍՊԸ
Ք. Երևան, Տիգրան Մեծի պող. 76, շին. 41
« Ամերիաբանկ ՓԲԸ»
Հ/Հ 1570054651800100
ՀՎՀՀ 00485116

Տնօրենի Լ/Ա ---------- Դ. Սաֆարյան
/ստորագրություն/
L.S.